Կարգապահական գործ թիվ ԿԳ-16037

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի հունիսի 7-ի թիվ 102-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/74-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ՕՎՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Կարեն Մեժլումյանի, Սիմոն Բաբայանի, Կարապետ Աղաջանյանի, Նելլի Հարութունյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Կարինե Օվչյանին (արտոնագիր 1113) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

<u>1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 01.02.2016թ. տրամադրված տեղեկանքի Կարինե Օվչյանն ունի 70.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. նոյեմբերից մինչև 2015թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար:

<u>2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը և գործի հանձնումը Խորհրդին.</u>

01.02.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի թիվ 51-Ա/ԿԳ-16037 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Կարիե Օվչյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

27.11.2014թ. կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին, նախագահող՝ խորհրդի անդամ Տ.Խուրշուդյան:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016թ. հունիսի 07-ին, ժամը՝ 18:39-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի բացատրությունները.

Փաստաբան Կարինե Օվչյանը 03.03.2016թ. դիմում է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին և խնդրել է նշանակված նիստը հետաձգել մեկ ամիս ժամկետով, այդ ժամկետում անդամավճարի չվճարված մասը վճարելու համար:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Կարինե Օվչյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 16.10.2010թ. (հիմք՝ Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.03.2016թ. տրամադրված թիվ ԿԳ/216-16 տեղեկանքը),

2) փաստաբան Կարինե Օվչյանը 01.02.2016թ. դրությամբ ունեցել է 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մասով չկատարված պարտավորություն, որը հաշվարկվել է 2014թ. նոյեմբերից մինչև 2015թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար (հիմք՝ Պալատի ֆինանսական ծառայության կողմից 01.02.2016թ. տրամադրված թիվ 24/16 տեղեկանքը),

3) փաստաբան Կարինե Օվչյանը Պալատի՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի թիվ 1510002794720100 հաշվեհամարին 26.02.2016թ. փոխանցել է 50.000(հիսուն հազար) ՀՀ դրամի չափով գումար և 03.03.2016թ. դրությամբ Կարինե Օվչյանի պարտքի չափը կազմել է 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ գումար (հիմք՝ Պալատի ֆինանսական ծառայության կողմից 03.03.2016թ. Խորհրդին տրամադրած թիվ 61/16 տեղեկանքը),

4) փաստաբան Կարինե Օվչյանը 2014թ. նոյեմբերից մինչև 2015թ. դեկտեեմբեր (ներառյալ) ամիսների համար անդամավճարի մասով ունեցած 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով պարտավորությունն ամբողջությամբ կատարել է (հիմք՝ Պալատի ֆինանսական ծառայության կողմից 07.06.2016թ. Խորհրդին տրամադրած թիվ 107/16 տեղեկանքը):

5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 16.01.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Կարինե Օվչյանի (արտոնագիր 113, ստացված՝ 16.10.2010թ.) նկատմամբ 2010-2016թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կարինե Օվչյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ *Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:*

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ *Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:*

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*

Համաձայն Կարգի 17-րդ կետի՝ «*Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Փաստաբանի կողմից անդամավճար չվճարելու հիմքով հարուցված երկրորդ կամ հետագա ցանկացած կարգապահական վարույթ չի կարող կարճվել հարուցելուց հետո պարտքի մարման հիմքով:* ...»: Նշված Կարգը հաստատվել է 26.12.2013թ.-ին, ուստի 16-րդ և 17-րդ կետերում նշված ժամկետները պետք է հաշվարկել այդ ժամանակահատվածից սկսած:

Վերոնշված կանոնների վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության, բացառությամբ Կարգի 17-րդ կետով սահմանված դեպքի, որի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների պարտադիր առկայությունը՝

- ✓ կարգապահական վարույթը պետք է հարուցված լինի առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի նկատմամբ և
- ✓ մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելն անդամավճարի պարտքը պետք է ամբողջությամբ մարված լինի:

Փաստաբան Կարինե Օվչյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.02.2016թ. տրամադրած տեղեկանքով, սակայն մինչև Խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը փաստաբան Կարինե Օվչյանը 2014թ. նոյեմբերից մինչև 2015թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար անդամավճարի մասով ունեցած 70.000(յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով պարտավորությունն ամբողջությամբ կատարել է (հիմք՝ Պալատի ֆինանսական ծառայության կողմից 07.06.2016թ. Խորհրդին տրամադրած թիվ 107/16 տեղեկանքը):

ՀՀ Փաստաբանների Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.03.2016թ-ի տեղեկանքից հետևում է, որ փաստաբան Կարինե Օվչյանի նկատմամբ նախկինում չի կիրառվել Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված ,Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)ե 17-րդ կետը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով ,Փաստաբանության մասինե ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, Կարգի 17-րդ կետով, Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կարինե Օվչյանի (արտոնագիր 1113) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված ,Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)ե 17-րդ կետի հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Կարինե Օվչյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան